ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.11.2019թ.
Ժամը 12[00]

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Բարրի Թրեյդ» ՍՊԸ
2	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
3	«Կանիֆարմ» ՍՊԸ
4	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
5	«Վիոլա» ՍՊԸ
6	«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա.Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գիները և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա.Սահակյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Ընդհանուր (նախահաշվային) գին՝ ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը	Գին (առանց ԱԱՀ)՝ ՀՀ դրամ	ԱԱՀ՝ ՀՀ դրամ	Գին (ԱԱՀ-ով)՝ ՀՀ դրամ
1	Արհեստական շնչառության սարք	հատ	2	43,000,000	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	52,000,000	-	52,000,000
2	Ներքնակ բժշկական	հատ	250	11,250,000	«Բարրի Թրեյդ» ՍՊԸ	5,000,000	1,000,000	6,000,000
					«Կանիֆարմ» ՍՊԸ	8,250,000	-	8,250,000
3	Կենսաքիմիական անալիզատոր	հատ	5	25,000,000	«Վիոլա» ՍՊԸ	3,950,000	-	3,950,000
					«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ	3,950,000	-	3,950,000
4	ԻՖԱ անալիզատոր	հատ	5	25,000,000	«Վիոլա» ՍՊԸ	11,840,000	-	11,840,000
					«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ	16,999,000	-	16,999,000
5	Տեսակոլոնոսկոպ բարձր թույլատրելիության մատրիցով՝ սնուցման պոմպով, ինսուֆլյատորով, ադապտորով և անհարժեշտ խողովակներով ու կոմպլեկտավորող մասերով	հատ	1	22,442,000	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ	19,460,000	-	19,460,000
6	Նյարդավիրաբուժության համար նախատեսված բարձր արագությամբ էլեկտրական ուժային ունիվերսալ սարքավորման հավաքածու, որն իր մեջ կներառի ծակման և տաշման, անվտանգ գանգահատման ու գանգածակման ծայրակալներ իրենց ծայրադիրներով, սարքավորման խնամքի համար նախատեսված պարագաներով	լրակազմ	1	24,960,000				

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.7 կետի պահանջները, **28.11.2019**թ.-ին որոշեց կասեցնել նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ **04.12.2019**թ. ժամը **11^{30}**-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) վարել միաժամանակյա բանակցություններ:

Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ մասնակիցներին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

3.4 Սահմանված ժամկետում նախատեսված բանակցություններին ներկայացել էին «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի տնօրենը և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ի ու «Վիոլա» ՍՊԸ-ի տնօրենների կողմից լիազորված անձինք և առաջարկեցին հետևյալ նոր (նվազեցված) գները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Ընդհանուր (նախահաշ-վային) գին՝ ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը	Գին (առանց ԱԱՀ)՝ ՀՀ դրամ	ԱԱՀ՝ ՀՀ դրամ	Գին (ԱԱՀ-ով)՝ ՀՀ դրամ
1	Արհեստական շնչառության սարք	հատ	2	43,000,000	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ	43,000,000	-	43,000,000
3	Կենսաքիմիական անալիզատոր	հատ	5	25,000,000	«Վիոլա» ՍՊԸ	3,400,000	-	3,400,000
					«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ	3,500,000	-	3,500,000

Ծանոթություն. Մասնակիցների առաջարկած, բայց վերը նշված աղյուսակում չնշված գնային առաջարկները մնացել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա.Սահակյան)

4.1 **04.12.2019թ.**-ին՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներ հայտարարել՝

1) «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

2 «Բարրի Թրեյդ» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով,

3) «Վիոլա» ՍՊԸ-ին՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով,

4) «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին՝ 5-րդ չափաբաժնի մասով:

Բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների շահավետության:

4.2 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չէր ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, որոշեց սույն ընթացակարգը նշված չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել հայտերի բացման նիստի արդյունքները և 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա.Սահակյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստն անցկացնել ոչ ուշ, քան 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացվելիք՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը, ժամը 11^{00}-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Գ. Անտոնյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան